# Արձանագրություն 6.

04.11.2021թ. կայացավ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դպրոցական խորհրդի նիստը՝ մասնակցությամբ խորհրդի բոլոր անդամների

## Օրակարգ.

1. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործառույթի փոփոխման ծրագիրը ներկայացնելու մասին

(զեկ. խորհրդի նախագահ Գ. Չալյան)

Լսեցին 1. խորհրդի նախագահ Գ. Չալյանին, ով ներկայացրեց հաստատության գործառույթի փոփոխման ծրագիրը ներկայացնելու մասին: Նա մանրամասնորեն բացատրեց ողջ մասը, թե Հայաստանի Հանրապետության կառավարության 27 օգոստոսի 2021թվականի N1380-Ն որոշման համաձայն ինչ հիմնական փոփոխություններ պետք է կատարվեն:

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 13-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N319 որոշմամբ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հ/դ» ՊՈԱԿ — 04.11.2021թ

ուսումնական հաստատության անվանումը — տարեթիվը

հաշվի առնելով «Աշակերտական ներքին կարգապահական կանոնների ընդունման (հաստատման) կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կետերի պահանջները, խորհուրդը

Որոշում է

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի պաշտոնի Համար 2021 թվականի նոյեմբերի 10-ից հայտարարել մրցույթ։

2. Հաստատել տնօրենի պաշտոնի համար մրցույթի անցկացման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի։

3. Կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր լինելու համար մրցույթի անցկացման մասին հայտարարությունը հրապարակել azdarar.am ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 174-Ն որոշման սահմանված կարգով։

4. Մրցույթին մասնակցել ցանկացողների դիմումները /փաստաթղթերը/ ընդունման պատասխանատվությունը վերապահել խորհրդի անդամներ Համբիկ Մկրտչյանին և Սևադա Մանուկյանին։

5. Մրցույթն անցկացնել Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոցի շենքում, այդ նպատակով համար

պատմամշակութային անկյունում, 2021 թվականի
դեկտեմբերի 14-ին, ժամը 14⁰⁰-ին
6. Խանջյանցի խորհրդի նախագահ
Գ. Հայրապետյանի կազմակերպությամբ փորձերի
թարմեր պաշտոնի համար ծրագրի հա-
յտարարելու մասին խորհրդի անդամ որոշ-
ման պարտավոր և հաշվետվության
ընթացք. Որոշվեց 2021 թվականի նոյեմբե-
րի 10-ի պարզած կարգով և պաշտո-
նական գործերում ներկայացնել Հայաս-
տանի Հանրապետության ԿԳՄՍ նա-
խարարին և Գերատեսչության մարզպետին.

Խորհրդի նախագահ [signature] Գ. Հայրապետյան
Խորհրդի քարտուղար [signature] Լ. Մանուկյան

**Մրցույթի հայտարարություն**

Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N3 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի

կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N3 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ում

2021 թվականի նոյեմբերի 10 -ից մինչև նոյեմբերի 30 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը9:00-ից մինչև ժամը 17:00 -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի _դեկտեմբերի 14 -ին՝ ժամը 14:00-ին, Գեղարքունիքի մարզի Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ում ՝ հասցե Ք. Գավառ Արծրունի Եղբայրների 53

Տեղեկությունների համար դիմել Ա. Մանուկյանին՝099769976

gavar3@schools.am

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 10 նոյեմբերի 2021 թվական:**